ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 08 » մայիսի 2025թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 5

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. վեցերորդ նստաշրջանի՝ մայիսի 08-ի, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներկու անդամները, բացակա էին՝ Հարություն Պապյանը, Աննա Ասրյանը և Կսրլեն Վերմիշյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ մայիսի 08-ի նիստի օրակարգը՝ համաձայն՝ ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ ՄԱՅԻՍԻ 08-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ մայիսի 08-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու և Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերը հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի բյուջեից գումար տրամադրելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության ԵԿՄ Ստեփանավանի տարածքային բաժանմունքին գումար նվիրաբերելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում փոփոխություններ կատարելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Էդուարդ Մելիքսեթյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի ապրիլի 29-ին կայացած հանրային լսումների արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց՝ տալ հավանություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին Լոռի Բերդ համայնքի մասնակցության առաջարկությանը:

Հաստատել՝ Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ համաձայն՝ հավելվածի:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. ապրիլի 11-ի 25-Ա որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց՝ Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727 հոդվածով նախատեսված գումարից համայնքի հանրակրթական դպրոցների շրջանավարտներին յուրաքանչյուրին տրամադրել՝ 10.000-ական:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿՄ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ԳՈՒՄԱՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ երկրապահ կամավորական միության Ստեփանավանի տարածքային բաժանմունքի նախագահի գրությունը՝

Ավագանին որոշեց՝ ՀՀ ԵԿՄ Ստեփանավանի տարածքային բաժանմունքին՝ մայիսի 8-ի Երկրապահի օրվա կապակցությամբ, Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» ծրագրի 08 բաժնի 04 խմբի 02 դասի 4819 հոդվածով նախատեսված գումարից 100000 (մեկ հարյուր հազար) դրամը տրամադրել որպես նվիրատվություն:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի հունիսի 09-ը, ժամը՝ 12:00-ն:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Չատինյան Վանո Վալերի

Գրիգորյան Աննա Հրայրի

Սերոբյան Անի Սամվելի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.